

**Ա.Ռ.Ա.Ն.ՉԱՐ ՍԵՊՈՒՀ ԱՄԱՏՈՒՆԻ
ԳՆԴԱՊԵՏ ՀԱՅԿԱՄԱՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԻՆ**

Կըռուի կ'երթար հեծելագորն հայկական
Սանձերն ամէն պիւրկ քաշելով միաբան.
Սարսուռ կ'անցնէր պարսիկ գունդին սեւամած
Հեր, Զարեւանդ դող ու թընդում էր առած:
— Պիշ դիտեցէ՛ք, տըղա՛ք, մամբան բըլուրին
Կը տեսնէ՞ք ա'մպը վերացած դէպ' երկին:

Արեւն երկնի քարձուցէն
Նոր կը չափէ միջօրէն.
Լայնասաղարք թաւ սօսին
Թոյլ խոնարհած է գետին.
Պաղ պաղ քամին չի փըշեր
Լուռ է տերեւն աներեր:

Եւ սուրբալով այդ մամբայէն ամայի
Առանց հովի կը վերանայ բարդ փոշի:
Մըտիկ ըրէ՛ք, կը լըսէ՞ք դափն ու թընդին
Կը լըսէ՞ք դու՛ք ձիւն փըռնիչն ու գոփին:
Կըռուի կ'երթար հեծելագորն հայկական
Սանձերն ամէն պիւրկ քաշելով միաբան.
Սարսուռ կ'անցնէր պարսիկ գունդին սեւամած,
Հեր, Զարեւանդ դող ու թընդում էր առած:

Գետերն ինչպէս լեռնային
Վիշապաճայն կը հոսին,
Այսպէս կ'անցնին փոքորկուն
Վարիչն ու ձին անըրկուն.
Զերդ նաւերու գումարտակ
Առագաստներն ուռուցիկ,
Կըտրելով գաշտն կապուտակ
Կ'անցնին ծովերն սաստկալիք:
Քաջերու գունդն է ձիաւոր
Հայաստանի զինաւոր,
Կը շողայ տէգն ու նիգակ.
Յառա՛ջ, ով քա՛ջ նահատակ:

Պետ եւ գըլուխն աշխէտ ձիովն առջեւէն
Կ'երթար դիւցազն, երիտասարդ մ'ասպազէն.
Վիզն ուղղասիւն, ազնւաճալ կը թընչի
Ձին սիրահար բանակներու եւ մարտի:
Սանձն ռսկեսար հեծելայն առոյգ պինդ բռնած
Ասպանդակին հազիւ ռոփերն է դըրած.
Բերդ մը շարժուն, վըրան կանգուն աշտարակ,
Զէնքերը մուր, դէմքը կարմիր արեւակ:
Սեւ բիւրեղով անքարք լաբած դէպ' ուղին
Կը փայլակէ նըման մըռայլ ամպրոպին.
Սէր եւ շըբքներն, քաղցրը ժըպիտ եւ համբոյր,
Վախ կը սըփռէ մինչ գարգամակն արջնաքոյր:

Կարծես սընած միշտ ձիերու գաւակին
Ծաղիկ ըլլան կայծուտ ժայռերն իր երթին.
Հագիւ կանգնած սօսիներուն գով շուփին,
Երկու հազար առջեւն հեծեալ կը շարունին:
Շըքեղ կուրծքով երկվարներ սիգապանծ
Կը փոքորկին ու կը ցընցեն մեծաշարժ.
Երախներէն ու պիկներէն բոցաշունչ
Դուրս կը ժայթփեն, փրփուր, պղպջակ փունջ առ
փունջ.

Ու փոքրելով երկիրը պինդ դափն ռոփն
Մարտի պատրաստ կը խրխընցան, կը թօթուին:
Հագիւ իրենց դէմքն տէրերուն քրտնահար
Վայրկեան կու տան սլաֆով սրբել առնաբար:
Ասպետն իր յորդ վարսերէն վար թօթուելով
Մարգարտեայ ցօղն վըրայով գոյգ վարդերուն
Նըշան կու տայ գընդին, նիգակն ուղղելով
Դէպի հեռուն, կը մտրակէ ձին թռչուն:
Կըռուի կ'երթար հեծելագորն հայկական
Սանձերն ամէն պիւրկ քաշելով միաբան.
Սարսուռ կ'անցնէր պարսիկ գունդին սեւամած
Հեր, Զարեւանդ դող ու թընդում էր առած:

Հէ՛յ, դու ասպետ քաջա՛ծի,
Գեղեցկատես եւ արի,
Ո՞վ ես, եւ ո՞ւր կը դիմես.
Հեծեալներովդ գուգերես:

«Ես եմ Հայոց հեծելակներուն գնդապետ,
Քաջ վարդանէն հրաման ունիմ դառնաղէտ.
Երթալ ջարդել Պարսիկներուն պիղծ մարարն,
Ես եմ, ելէ՛ք, Ամատունին Առանձար»:

Աստուած օրհնէ ըզբեգ եւ գունդըդ արի,
Թո՛ղ հրեշտակներն յարդարեն քեզ լայն ուղի.
Օրհնեալ ըլլան ձեր յաղթ սուրբն ամբակուռ,
Առէ՛ք հոգւոյս շրթներուն բոցն ու համբոյր.
Սիրտըս ձեզի աւանդ ըլլայ, հեծեալներ,
Թող գայ վըրաս ամպածըրար փոշին ձեր:
Սուրբ է մամբադ եւ փառքերով լուսավառ,
Զա՛րկ նըժոյգիդ, պիտի յաղթես Առանձար:

Կըռուէն կու գար հեծելագորն հայկական
Սանձերն ամէն պիւրկ քաշելով միաբան.
Սարսափած էր պարսիկ բանակն արջնաքոյր,
Հեր, Զարեւանդ կը թընդային ահալուր:

1851 Ն. Ղ. ԱԼԻՇԱՆ
Թրգ՝ աշխ. Հ. Վ. Յովհաննէսեան

ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Ատենօք կ'ապրէր քաղաքի մը մէջ, որուն
անունը աւելորդ է տալ հոս, բարեբարոյ
եւ պարզամիտ մարդ մը, որ օժտուած էր
քանի մը շնորհալի ձիրքերով:

Արդ, օր մը կարդայած ըլլալով Աւե-
տարանին մէջ՝ թէ աւելի դիւրին է որ
մալուխը ասեղի ծակէն անցնի քան մեծա-
տուն մը մտնէ երկնքի թաղաւորութեան
մէջ՝ սարսափեցաւ յոյժ:

Ոչ թէ ինքը երկնքի դռնէն նե՛րս մտնել
կը փափաղէր այնպէս նոյն ընդ նոյն,
քանի որ, բաց աստի, Աստուծոյ օրէնքնե-
րուն դէմ արհամարհանք մը պիտի նկատ-
ուէր, որ անոր բաւական ժամանակ սահ-
մանած էր իր կեանքի պայքարն ունենա-
լու, անցնելով այս երկրէս: Բայց երբ
լրանային իր օրերը՝ կ'ուզէր իր հետ միա-
սին երկնք տանել յաւերժական կեանքի
արժանաւոր հոգւոյ մը յաղթանակը:

Վասն զի Աստուծոյ ահռելի մէկ պար-
զեն է հոգին, բայց միանգամայն մար-
դուս յաղթանակ մ'է:

Ուրեմն, լըջօրէն մտածելով մալուխի եւ
ասեղի այն խօսքերուն վրայ՝ թուեցաւ
իրեն որ հարուստ եւ հզօր հոգիները, ա-
ռանց իմանալու, հարստութեան եւ կա-
րողութեան պատճառաւ համապատասխան
բրտութիւն մը կը ստանային, մարդկային
դժբախտութիւններու անզոյ պատճառաւ
աստիճան: Ուստի անոնց հոգիները կոշտ
ու թանձր ըլլալով՝ չունին այլեւս թեթե-
ւութիւն դէպի երկնք թռչելու. ընդհա-
կառակն հակամէտ են զահալիթելու վար
դէպի այն վայրը՝ ուր հոգին չ'ապրիր,
Վասն զի ապրելու իրաւունք չունի այլեւս:

Ուստի այս համոզումը կաղմելով՝ խոր-
հեցաւ իր ընկիւղի մասին. եւ վերջապէս
յարմարօրէն իր ինչքերը կարգադրելով
այնպէս մը՝ որ իրեն եւ իր ընտանիքին
համար կարելորդ չպակսի՝ աւելորդով
ուրիշներու օգնութեան կը հասնէր, ճիշդ

այնպէս՝ ինչպէս կ'ըսէ Քրիստոս. «Աւե-
լորդը աղքատներուն բաշխեցէք»:

Եւ եթէ չար մտածութիւն մը վրա՛յ
հասնէր՝ կը կրկնէր սա խօսքերը մեծ ա-
ղօթքին. «Փրկեա զմեզ ի չարէ»:

Կը տեղեկանար թէ ո՛ւր սփոփանքի կա-
րօտ թշուառութիւններ կային. բայց ա-
սիկա այնպէս մը կ'ընէր՝ որ ոչ մէկն
իմանար: Զոր օրինակ՝ խանութները կ'եր-
թար եւ վաճառորդներուն կ'ապաւրէր
այսքան հաց, այսքան ալիւր, այսքան
գինի եւ կ'ըսէր. Տարէ՛ք այս կամ այն
հասցէին: Բայց առանց ճանչցնելու՝ թէ
ինքը ո՛վ է: Եւ վճարելն ու անհետանալը
մէ՛կ կ'ընէր:

Իրը այնքան տարօրինակ էր որ նոյն իսկ
եղած է, որ վաճառորդին մէկը զեղչ մը
պիտի ընէր գիններուն վրայ՝ եթէ իր ան-
սիրտ կինը արդիւած չըլլար իրեն:

Նոյնպէս կ'երթար ուր որ հիւանդներ
կային. եւ կ'ուզէր այցելել նաեւ խեղճ
բանտարկեալներուն: Բայց բանտապան-
ները թոյլ չէին տար իրեն, որքան ալ որ
կ'ապահովեցնէր գիրենք՝ թէ եօթը բարե-
դործութիւններէն մէ՛կն է որ կ'ուզէ ընել:
Մտածեց յետոյ հաւատքի վարդապե-
տութեանց ծանօթանալ, բայց միայն կար-
դալով անգամ մը նմանութիւն Քրիստոսի
նշանաւոր դրժոյկ մը՝ գտաւ հոն այսպէս
զրուած. «Կը փափագիմ որ զղջումս զգա՛ս
մանաւանդ՝ քան թէ անոր սահմանէ՛ն ու-
ղես հասկնալ թէ ի՞նչ ըսել է զղջում»:

Եւ դարձեալ. «Եթէ դու բերանացի ալ
զիտնաս բոլոր Աստուածաշունչը եւ բոլոր
իմաստուն անձերու վճիռները, ի՞նչ պիտի
չահիս անոնցմէ առանց Աստուծոյ շնորհ-
քին»:

— Քիչ մը կամա՛ց՝ զրքերուն հետ — ըսաւ
ինքնիրեն բարի մարդը, եւ յետոյ իր մըտ-
քին մէջ որոճալով կ'ըսէր. — Տէ՛ս ուրեմն,
առաջին հանդիպելուն դիւրին կը թուի

Աստուծոյ ճամբան սորվիլ, վասն զի գրքերը, այնչափ կարեւոր չեն՝ որչափ կարեւոր են իրաւագէտ դառնալու համար. եւ ճիշդ հո'ս է դժուարութիւնը:

Ու նաեւ գրուած գտաւ. «Մեծ խօսքերը անոնք չեն որ մարդը սուրբ եւ արդար կ'ընեն, այլ առաքինի կեանքն է որ սիրելի կ'ընէ Աստուծոյ»:

— Բուն ուղածս ա'ս է, — ըսաւ նա բոլորովին զոհ, — վասն զի անիկա անոյշ եւ մեղմ ձայնիկ մը ունէր, որ երբեք ընդունակ չէր բարձրանալ այն ամէն հնչուն եւ զու խօսքերուն՝ որ ամբոխները կը հիացնեն:

Նաեւ գրուած գտաւ. «Ունայնութիւն է աշխարհային պատիւներու եւ մարդկութեան մէջ մեծ դիրքի եւ իշխանութեան փափաղիլը»:

— Բայց աս խօսքը դե'ռ աւելի գործիս կու գայ, — վասն զի երբեք իր մտքէն չէր անցած եւ ոչ երազի մէջ ունեցած էր՝ կարողութեամբ եւ համբաւով իր նմաններէն դերազանցելու փափաղ:

* * *

Եւ այսպէս ապրելով՝ եղաւ որ իր մահուան բարի գործերու հաշուեցոյցը լեցուն էր իր պահապան հրեշտակին մօտ. սակայն նոտարներունը պղտիկ էր: Հազիւ չնչին բան մը թողուց դնաց՝ իր թաղումին բաւելու չափ. եւ ոչ մահադիւ տողիկ մը տպուեցաւ լրագիրներուն մէջ. միայն թէ ինք ալ զրուեցաւ, բայց առանց անուան, լրագիրներու այն հատուածիկին մէջ որ կ'ըսէ. «Մեռեալք այսչափ թուով: Ծընեալք, Արական 18, Իգական 19. Համադումար 37: Ամուսնութիւն 18»: Թիւերը կրնան փոփոխուիլ, բայց անունը միշտ այն է. «Քաղաքային Հաշուեցանկ», եւ այս հատուածն ալ երբեմն կը գտնուի Քրոնիկ արձագանգներ եւ Սակարանի Ցուցակ կոչուած վերնագիրներուն տակ. ան ալ այնքան մանրագիր տառերով՝ որ հարկ կ'ըլլայ ամէն ճիգ թափել ստուգելու համար: Ուրեմն ամէնէն բացարձակ անծանօթը, համաձայն իր սա պաղատանքին.

«Տէր, զիս անծանօթ պահէ»:

Բայց ի՞նչ հարկ կայ ասոր. զինքը Աստուծոյ լաւ ճանչցաւ: Ողջութեան ատեն ըլլալով չնաշխարհիկ մէկը՝ Աստուծոյ իրեն համար մասնաւոր երկու քերորէներ զրկեց, որպէս զի հոգին անոնեւ ու երկինք տանին. բան մը որ Աստուծոյ հազիւ թէ սուրբերուն կ'ընէ, կը հասկցուի՝ յայտնի սուրբերուն:

Կան թաղաւորներ, նաեւ քահանայապետներ, աշխարհի իմաստուններ, որ եթէ ուղեցին Արքայութիւն երթալ՝ հարկաւ զրուեցան իրենց քայլերը գործածել:

Ան շատ պատուաբեր տեղ մ'ունեցաւ. Արքայութեան մէջ, եւ գտնուեցաւ այնպիսի անձերու մօտ՝ որոնք հոս երկրիս վրայ անտարակոյս պիտի չբարեհաճէին անոր հետը խօսիլ. այն մարդերուն քովը՝ որոնք երբ ճամբայ կ'ելլեն դէպի անդրշիրմեան աշխարհը՝ միասին կը տանին բոլոր իրենց ծանօթութիւնները եւ իրենց գիտական պաշարը. բայց զո'ւր է, վասն զի դեռ չհասած Արքայութեան գուռը՝ կը հանդիպի այն՝ ինչպէս թէ ամառ ատեն մէկը հետը տուն տանի ձիւնի բեռ մը. ու հասնելէ առաջ այլեւս ոչինչ կը գտնէ: Ամէն գիտութիւն կը հալի ձիւնի պէս:

Հանդէսները, որ Արքայութեան մէջ կը կատարուին, ոչ ոք կրնայ նկարագրել եթէ ոչ այն՝ որ հոն կրցեր է մտնել, ինչպէս Տանդէի պատահեցաւ, բայց ան ալ մեղի շատ տարտամ տեղեկութիւններ մը աւանդեց, որովհետեւ դէպի երկիր վերադառնալուն պէս՝ յիշողութիւնը փախաւ դնաց, ինչպէս ինքն իսկ կը հասկցնէ:

Ամէն պարագայի մէջ, ինչ որ կարելի է հասկնալ, կարծես հոն վերէն ամբողջապէս կը տեսնուի անհունին միջոցը եւ կ'ըմբռնուի ամբողջ անչափելի ժամանակը առանց զարհուրելու, ինչպէս մեր մէջ կը հանդիպի, զէթ անոնց համար՝ որոնք միայն չափադիտութեան մասնագէտներ չեն: Ասկէ կարելի է հետեւցնել, որ անսահման Տիեզերքը կէտ մըն է ինչպէս սիւրբի տնակ մը, ժամանակն ալ անժամանակ է. բայց ի՞նչ ալ ըլլայ՝ աւելի հաւանական

կը թուի, որ երկրային բաներ այլեւս չեն յիշուիր, եւ ամէն փափաղ կը դադրի Աստուծոյ ներկայութեան:

Բայց ինչ որ ստոյգ է՝ հոն հիանալի նուագահանդէսներ կը տրուին: Հրեշտակները այնքան լաւ կը նուագեն ջութակ՝ որուն մենք գաղափար չունինք: Հապատակիցե'րը. յիշուի հրեշտակային թըրթուռներ ունին:

* * *

Արդ, օր մը Աստուծոյ կ'երթար, ինչպէս սովոր էր երբեմն երբեմն, այցելելու երանեալներուն, որոնք երանեալ կը կոչուին՝ վասն զի բոլորովին երանութեան յափշտակուած կերպարանք մը ունին:

Ահա թէ ի՞նչ պատահեցաւ:

Տեսաւ Աստուծոյ որ այս բարի մարդուն այտերէն մեղմիկ մեղմիկ վար կը հոսէին արցունքի երկու խոշոր կաթիլներ:

Աստուծոյ զարմանքը մեծ եղաւ, վասն զի մի միայն հոս այս երկրին վրայն է որ մարդիկ կ'արտասուեն:

Ինչպէս ամէնքը գիտեն՝ մարդկութեան այդ արցունքները վերջը երկինք կը փոխադրուին, եւ հոն տեսալ մը բոլորովին խորհրդաւոր յեղաշրջումով՝ նաեւ մեր ամէնէն աւելի քաջամուտ քրիստոնէական համար՝ մարդարիտներու կը փոխարկուին, որոնցմով յետոյ երկինքի թաւաւորութեան ճարտարապետները իրենց լաւագոյն զարդերը կը շինեն: Վերջապէս հեղուկ արցունքներ Արքայութեան մէջ չեն գտնուիր. իսկ երանելեաց դէմքերուն վրա՞յ՝ երբեք: Բայց ըսեմ որ Աստուծոյ հոն հրեշտակները կը նուագեն իրենց գերընտիր խմբերգներէն մէկը, որուն կ'ընկերանար այնպիսի սքանչելի երաժշտականութիւն մը՝ որ բոլոր աստղերն ու մոտակները կը պարէին այդ մեղեդիի պահուն:

— Ինչո՞ւ կու լսու, բարի՛ մարդ — հարցուց Տէրը այնպիսի մարդասիրութեամբ՝ որուն մենք ամէնէն հեռաւոր գաղափարն անգամ չենք կրնար ունենալ: — Հոս Ար-

քայութեան մէջ երջանիկ չե'ս. զքեզ բաւական չի՞ սփոփեր երաժշտութիւնը, զոր կը նուագեն իմ քերորէներս, ջութակներն ու տաւիղները իմ սերորէներուս:

Մարդը պատասխանեց. — միտքս բան մը կու գայ վարի երկրէն, ո'վ Տէր:

— Թերեւս հարստութիւննե'ր:

— Ո'չ, Տէր, ո'չ:

— Իշխանութիւն:

— Եւ ոչ խորհած եմ՝ երբ վա'րն էի:

— Փա՞ռք:

— Երկինքն մէջը տեղ ունենալէ աւելի ի՞նչ մեծագոյն փառք կրնայ ըլլալ:

— Հապա ի՞նչ:

Ու մարդն ըսաւ. — Երբ ես երկիր էի՝ իմ արիւնիս պտուղ աղջնակ մ'ունէի, որ յատկիկ թերթիկի նմանող սիրունիկ դէմք մը ունէր. իրիկունը կը քնանար իր պղտիկ անկողինին մէջ՝ ձեռքերը խաչաձեւ, եւ ամէն առտու երբ կ'արթնար՝ ուրախութեան կ'երգէր, որ ինքը՝ առանց գիտնալու՝ ապրելիք ունէր. այնպիսի աղու ձայնով եւ այնպիսի բերկրանքով կը նուագէր՝ որ մենք իր անունը զրինք Բերկրուհի. եւ այդ իր երգուածքը այնքան ջինջ բան էր որ աղօթք մը կը թուէր ինձի. ու լսելով աղջնակիս ձայնը՝ կը կարծէի թէ ե'ս ինքս կ'աղօթեմ: Այն աղօթքը, ո'վ Տէր, նորէ'ն միտքս կու գայ, եւ — ներէ' ով Տէր — ինձի աւելի՛ գեղեցիկ կը թուի՝ քան քու սերորէներուդ նուագը. Ո'չ, կարենայի՛, կարենայի՛, ո'վ Տէր, լսե'լ դեռ աղջնակիս ձայնը:

Եւ Աստուծոյ որ երկինքն է, եւ բարի է, եւ մեր օրէնքներէն բոլորովին տարբեր օրէնքներ ունի, ոչ միայն ներքեւ հոն Արքայութեան մէջ գործուած այն մեղքին՝ այլ եւ գաղթեցնել տուաւ սերորէներու նուագախումբը, եւ այնպէս մ'ըրաւ որ մի միայն Բերկրուհիին ձայնի՛ կը լսուի իր պարզուկ երգերուն մէջ, զորոնք կ'երգէր նա հոս երկրի վրայ. — եւ ահա երանեալները բացին աչքերնին, եւ աստղերը կանգ առին մտիկ ընելու:

ԱԼՔՐԵՏՈՅ ՓԱՆՑԻՆԻ

Թրգմ. Իտալ. է. Ղ. Տ.